

ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԲԱՂՂԱՍԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՑԸ ԵՒ ՇՈՒՇԵՒԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ 2021 թ. է. (հուլիս) համաժամ

Բաղղասար մետրոպոլիտի տպարանի պատմության վերաբերյալ ուշագրավ փաստերի ենք հանդիպում 1844—1855 թթ. վավերագրում, որոնք պայմանավորված էին սույն տպարանի գործունեության մասին ցարական տեղական իշխանություններին տեղեկություններ ներկայացնելու պահանջով: Այսպես՝ 1844 թ. սեպտեմբերի 16-ին Անդրկովկասի երկրամասի կառավարչապետը Ս. Էջմիածնի Սինոդին հղած թ. 190 գրությամբ տեղեկություններ է պահանջում այն մասին, թե ում վճռով է հիմնվել Շուշիի տպարանը, եւ թե ինչ հիմնավորմամբ է Սինոդը թույլատրել այնտեղ գրքեր տպագրել: Կառավարչապետը միաժամանակ Սինոդից պահանջում է ներկայացնել Շուշիում տպագրված գրքերի ցուցակը՝ ըստ տարեթվերի¹:

Սեպտեմբերի 27-ին Սինոդը որոշում է Ղարաբաղի կոնսիստորիայից պահանջել բողոքական քարոզիչների՝ հիմնադրման օրից սկսած Շուշիի տպարանում հրատարակված գրքերի ամբողջական ցուցակը, որը պետք է նաեւ թարգմանվեր ռուսերեն, ինչպես նաեւ՝ յուրաքանչյուր գրքից մեկ օրինակ²: Հոկտեմբերի 25-ին Ղարաբաղի կոնսիստորիայի՝ Սինոդին ուղղված գրությունից տեղեկանում ենք, որ բողոքական քարոզիչներից ձեռք բերված Շուշիի «վիճակային» (թեմական) տպարանը գտնվում էր Բաղղասար մետրոպոլիտի հոգեւոր վերատեսչության ներքո: Կոնսիստորիան, իր ձեռքի տակ չունենալով պահանջված հարցերի մասին անհրաժեշտ տեղեկությունները, պետք է դիմեր մետրոպոլիտին, որից պահանջված տեղեկություններն ստանալուց հետո դրանք կներկայացնեն

¹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1686, թ. 1:

² «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գք. Ի., էջ 413, հմմտ. ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, վավ. 175:

Սինոդին³: Անդրկովկասի երկրամասի կառավարչապետը Սինոդին ուղղված նույնմբերի 2-ի գրուկյամբ խնդրում էր արագացնել Շուշիի տպարանի մասին տեղեկությունների փոխանցումը: Սույն գրուկյունից պարզ է դառնում, որ կառավարչապետի այս պահանջը Ցարական Ռուսաստանի ներքին գործերի նախարարության հանձնարարականն էր⁴:

Արդեն նույնմբերի 8-ին Բաղդասար մետրոպոլիտը կոնսիստորիային է ուղարկում իր տպարանում հրատարակված 12 գրքերի ցուցակը, ինչպես նաև երեք գրքերից («Շիրիոնեան կալանաւոր», «Մաշտոց», «Տետրայբենական») մեկական օրինակ, որոնք ցուցակում զբաղեցնում էին 1-ին, 9-րդ եւ 12-րդ համարները: Մնացած գրքերից օրինակներ արդեն իսկ նախապես ուղարկվել էին էջմիածին՝ բացառուկյամբ այս երեք գրքուկների: Ինչ վերաբերում է բողոքական քարոզիչների տպագրած գրքերին, պետք է նշել, որ սույն տպարանում այդ գրքերից որեւէ օրինակ չէր պահպանվել, որ հնարավոր լիներ կազմել Շուշիում տպագրված գրքերի ամբողջական ցուցակը: Բաղդասար մետրոպոլիտին հայտնի չէին նաև, թե բողոքական քարոզիչները երբ եւ ում թույլտվուկյամբ են Շուշիում հիմնադրել տպարան⁵:

Նույնմբերի 9-ին Ղարաբաղի կոնսիստորիան էջմիածնի Սինոդին զեկուցագիր է ներկայացնում՝ փոխանցելով մետրոպոլիտի հայտնած տեղեկությունները, ինչպես նաև սահմանելով առաջին իսկ փոստով Սինոդին Շուշիի թեմական տպարանում լույս տեսած 12 անուն գրքերի⁶ հայերեն-ռուսերեն ցուցակի շտապ ուղարկումը՝ վերոհիշյալ երեք գրքերի հետ միասին⁷: Այն վերնագրված է «Ցուցակ մատենիցն ու գրքուկաց տպագրելոց ի վիճակային տպարանին Ղարապաղու»: Ցուցակում գրքերի անվանումները («անուանք մատենից») համարակալված են, որոնցից յուրաքանչյուրի կողքին նշված է տպագրուկյան տարեթիվը («Երբ այնուքիկ մատենաք տպեալ են»), ինչպես նաև տպագրուկյունը թույլատրած մարմնի անունը («որոյ վճռահատութեամբ է տպեալ այնուքիկ»):

³ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1686, թ. 5 եւ 2րջ.:

⁴ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1686, թ. 8:

⁵ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գր. Ի., էջ 413—415:

⁶ Այդ ժամանակ Շուշիում փաստացի տպագրվել էր ոչ թե 12, այլ 13 անուն գիրք: Բանն այն է, որ 1839 թ. այստեղ հրատարակվել էր երկու անուն գիրք համառոտ քերականության մասին, որոնցից միայն մեկն է նշված վերոհիշյալ ցուցակում (տես Ս. ՊԵՏՈՅԱՆ, Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի տպարանում 1837—1840 թթ. հրատարակված գրքերի շուրջ, «Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք», Երևան, 2021, թ. (10), 120—140 էջ):

⁷ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1686, թ. 15 եւ 2րջ.:

Յուցակը գլխավորում էր «Շիլիոնեան կալանաւոր»-ը (1837 թ.), որից, ինչպես նաեւ Շուշիում տպագրված «Ծիսարան որ կոչի Մաշտոց» (1840 թ.) եւ «Տետր այբբենական» (1840 թ.) գրքերից մեկական օրինակ կոնսիստորիան ուղարկել էր էջմիածնի Սինոդին: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ երբ Ղարաբաղի կոնսիստորիան 1838–1840 թթ. իր տպագրած գրքերից առաջին անգամ օրինակներ էր առաքում էջմիածնի Սինոդին, այդ երեք գրքերը դուրս էին մնացել, քանի որ Բաղդասար մետրոպոլիտը դրանք տպագրել էր սեփական նախաձեռնութեամբ՝ առանց Սինոդի թույլտվութեան: Թերեւս այդ երեք գրքերն էջմիածին շուղարկելով՝ մետրոպոլիտը խուսափել է ավելորդ լարվածութունից:

1844 թ. դեկտեմբերի 11-ին Սինոդը, Ղարաբաղի կոնսիստորիայից ստանալով Շուշիում լույս տեսած գրքերի ցուցակը, էջմիածնի գրատան (գրադարան) վերատեսչին հանձնարարում է պատրաստել ցուցակում հիշատակված գրքերը՝ դրանք Անդրկովկասի երկրամասի կառավարչապետին ուղարկելու համար⁸: 1845 թ. հունվարի 31-ի գրութեամբ Սինոդը, այնուամենայնիվ, Ղարաբաղի կոնսիստորիայից պահանջում է Շուշիում տպագրված գրքերի մեկական օրինակներ: Այդ պատճառով 1845 թ. ապրիլի 11-ին Ղարաբաղի կոնսիստորիան, «վասն հասուցանելոյ առ դիւան քաղաքական կառավարութեան Կովկասու», երկրորդ անգամ էջմիածին է առաքում հիշյալ ցուցակի մնացյալ 9-ը գրքերը⁹: 1845 թ. մայիսի 4-ին Սինոդն էջմիածնի գրատան վերատեսչին կրկին հանձնարարում է պատրաստել ցուցակում հիշատակված գրքերը՝ ցուցակով հանդերձ դրանք Անդրկովկասի երկրամասի կառավարչապետին ուղարկելու համար¹⁰:

1846 թ. մարտի 20-ին Կովկասի փոխարքա եւ Նովոռոսիայի ու Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ Միխայիլ Վորոնցովն էջմիածնի Սինոդին է ուղարկում թ. 2887 գրութունը: Դրանից տեղեկանում ենք, որ վերոհիշյալ ցուցակը՝ մեկական օրինակ գրքերով, փոխանցվել է ներքին գործերի նախարարին, որը գրաքննելու նպատակով դրանք հանձնել է ժողովրդական լուսավորութեան նախարարին: Վերջինս դրական էր արձագանքել այն փաստին, որ գրաքննութիւնը բոլորն էլ համարել էր թույլատրելի: Նույն գրութեան մեջ փոխարքան խոսում է նաեւ էջմիածնի Սինոդի բարյացակամ վերաբերմունքի մասին, որով Շուշիի հիշյալ տպա-

⁸ ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 17, վավ. 563:

⁹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1. գ. 1686, թ. 32:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 17, վավ. 563:

րանի գոյությունը ճանաչվում էր օգտակար՝ միաժամանակ Ղարաբաղի կոնսիստորիային հրահանգելով, որ հետագա հրատարակությունները պատշաճ կերպով իրականացվեն սահմանված գրաքննական կանոններով: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ Ցարական Ռուսաստանի պատկան մարմինները հնարավոր են համարել Շուշիի տպարանի հետագա գործունեությունը. Սինոդին են վերադարձրել գրաքննված բոլոր գրքերը՝ առանձին անվանացանկով¹¹: Փաստորեն՝ սա կարելի է համարել Շուշիի «վիճակային» (թեմական) տպարանում տպագրվող գրքերի նկատմամբ պաշտոնական ընթացակարգով իրականացված գրաքննության առաջին փորձը:

Հարկ է նշել, որ հետագա տասնամյակներին Կովկասի գրաքննական հանձնախմբում հանդիպում է մի վավերագիր, որում, ի թիվս այլ տպարանների, անդրադարձ է կատարվում նաև Շուշիի կոնսիստորիայի տպարանին՝ շեշտելով, որ այն իր գործունեությունն իրականացրել է ներքին գործերի նախարարի որոշմամբ: Այդուհանդերձ, իբրեւ տպարանի գործունեության թույլտվության օր՝ հիշատակված է 1846 թ. մարտի 20-ը, որը Վորոնցովի թ. 2887 գրության ամսաթիվն է¹²:

Սինոդի՝ 1846 թ. հունիսի 28-ի մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Ղարաբաղի կոնսիստորիային պետք է փոխանցվեր ներքին գործերի նախարարի վերոհիշյալ հրահանգը՝ հատուկ ուշադրություն հրավիրելով այն հանգամանքի վրա, որ թեմի հետագա բոլոր հրատարակությունները պետք է նախապես ունենային Սինոդի հավանությունը¹³: Այստեղ հարկ է նշել, որ հիշյալ 12 անուն գրքերից ոչ բոլորն էին նախքան տպագրությունը ներկայացվել Սինոդի հավանությանը: «Շիրիոնեան կալանաւոր», «Ծիսարան որ կոչի Մաշտոց» եւ «Տետր այբբենական» գրքերը հրատարակվել էին Բաղդասար մետրոպոլիտի արտոնությունմբ՝ առանց Սինոդի «վճռահատութեան», ինչպես նշված է Ղարաբաղի վիճակային տպարանում լույս տեսած գրքերի եւ գրքույկների ձեռագիր ցուցակում¹⁴: Այս արձանագրումը բավական ուշագրավ է այն պատճառով, որ նախկինում Բաղդասար մետրոպոլիտին Սինոդն իրազեկել էր գործող կարգի մասին,

¹¹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1686, թ. 33–34:

¹² Վրաստանի ազգային արխիվ, ֆ. 480, ց. 1, գ. 849, թ. 13 շրջ.:

¹³ ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 23, վավ. 422:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 1686, թ. 15:

ըստ որի՝ առանց էջմիածնի Սինոդի գրաքննության՝ Ղարաբաղի թեմը չէր կարող ինքնուրույն կերպով տպագրել եկեղեցական բնույթի գրքեր:

Հետեւաբար, անդրադառնալով Ս. Արեշյանի, իսկ ավելի ուշ նաեւ՝ Ս. Ավագյանի հայտնած վերոհիշյալ տեղեկությանը, թե ռուսական պատկան մարմինները 1845 թ. բռնագրավել էին մինչ այդ Շուշիում տպագրված 12 անուն գրքերը, չեն համապատասխանում իրականությանը, քանի որ, ինչպես տեսանք, այդ գրքերը ոչ թե բռնագրավվել էին, այլ ցարական օրենքների համաձայն՝ պատշաճ կերպով գրաքննվել եւ ապա վերադարձվել էին Սինոդին: Հասկանալի է, որ Լեոյի եւ Ս. Արեշյանի հիշատակած 12 անուն գրքերի ցուցակը միեւնույն վավերագիրն է՝ Հայաստանի ազգային արխիվում պահվող՝ Բաղդասար մետրոպոլիտի ստորագրությամբ հայտնի 12 անուն գրքերի ցուցակը, որի մեկ օրինակը Ս. Արեշյանը տեսել է Սանկտ Պետերբուրգի արխիվներում:

Այս ցուցակը մեկ այլ կարեւոր նշանակություն ունի: Հենվելով սույն աղբյուրի վրա՝ կարելի է եզրակացնել, որ 1841–1844 թթ. Բաղդասար մետրոպոլիտի տպարանում որեւէ գիրք չի հրատարակվել, հակառակ դեպքում այդ մասին հիշատակված կլինեին 1844 թ. նոյեմբերի 9-ի թվագրությամբ հայտնի հիշյալ ցուցակում: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք 1845–1854 թթ. Բաղդասար մետրոպոլիտի տպարանում շարունակվել է գրքերի տպագրություն, ապա այս մասին մեզ չհաջողվեց որեւէ վկայություն գտնել: Հայ գրքի մատենագիտական ցանկերն ուսումնասիրելիս 1841–1854 թթ. այս տպարանում հրատարակված որեւէ գրքի մասին դարձյալ վկայություն չենք հանդիպում:

Դեռեւս մեկ դար առաջ Լեոն նույնպես հետաքրքրվել է այս հարցով, սակայն իր ձեռքի տակ եղած փաստաթղթերը բավարար չեն եղել պնդելու, որ հիշյալ ժամանակահատվածում Բաղդասար մետրոպոլիտի տպարանում որեւէ գիրք է տպագրվել: Լեոն ընդամենը հիշատակում է, որ 1847 թ. Բաղդասար մետրոպոլիտը, պատասխանելով Շուշիի գավառապետի հարցմանը, ասել է, որ տպարանն իր անմիջական հսկողության տակ է գտնվում, սակայն վերջին տարիներին այնտեղ գիրք չի տպագրվել: Իսկ մինչ այդ թեմական տպարանում հրատարակված գրքերը հիմնականում եկեղեցական բնույթի են եղել, որոնք լույս են տեսել էջմիածնի Սինոդի թույլտվությամբ¹⁵:

¹⁵ Լեո, նշ. աշխ., էջ 126–127:

Լեոն հիշատակում է, որ տպարանի համեստ, բայց երախտավոր գործիչներից մեկը՝ Խաչատուր քահանա Ղալաբեկյանցը, Բաղդասար մետրոպոլիտի ձեռնասուն սպասավորն էր, որը վախճանվեց 1904 թվականին՝ խոր ծերություն (87 տարեկան) հասակում: Այնուհետև Լեոն մեզ անհայտ մի վավերագրից մեջբերում է հետևյալ տեղեկությունները. «Ի 1845 ամ է ցայժմ գտանի ի վիճակային Հոգեւոր տպարանի Ղարաբաղու, որ ի Շուշի քաղաքի, եւ իբրեւ տպարանապետ հմուտ տպագրական արուեստի տեսուչ կարգեալ անդանօր»¹⁶: Խաչատուր քահանա Ղալաբեկյանցը հիշատակվում է նաեւ 1848–1851 թթ. Ղարաբաղի թեմում ձեռնագրված քահանաների ցանկում՝ որպէս «ի հոգեւորականաց Շուշույ Վերին թաղի Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ»¹⁷:

1841–1854 թթ. այս տպարանում ամենայն հավանականությամբ գրքերի տպագրություն չիրականացնելը դեռեւս չէր խոսում տվյալ տպարանի անգործության մասին: Բանն այն է, որ տպարանում կան տարաբնույթ աշխատանքներ՝ վնասված գրքերի վերականգնումից, կազմարարական աշխատանքներից մինչեւ տպագրական գործիքների վերանորոգում: Այսկերպ հասկանալի է դառնում այն իրողությունը, որ 1845 թվականից սկսած Խ. Ղալաբեկյանցը հիշյալ տպարանում կարգված էր որպէս տպարանապետ:

Տվյալ ժամանակահատվածում Բաղդասար մետրոպոլիտի տպարանում գրքերի տպագրության հնարավոր բացակայությունը կարելի է բացատրել նաեւ Ղարաբաղի թեմի ֆինանսական դժվարություններով¹⁸, որոնց մասին Բաղդասար մետրոպոլիտը 1845 թ. ապրիլի 24-ին գրել է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին: Նույնիսկ թեմի շատ սպասավորներ իրենց ծառայությունը ձրիաբար շարունակում էին թեմակալ առաջնորդի հայրական հոգածություն ներքո՝ հավատացած լինելով, որ ապագայում կվարձատրվեն¹⁹:

Չնայած թեմում տիրող նյութական սուղ միջոցներին՝ Բաղդասար մետրոպոլիտն ամեն գնով ջանացել է ապահովել թեմական հոգեւոր

¹⁶ ԼԷՕ, էջ 126:

¹⁷ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գք. Թ., էջ 163:

¹⁸ Այդ պահին թեմի պարտքը կազմում էր 4913,20.5 մանեթ (ռուբլի), որը ձեւավորվել էր 1841–1844 թվականներին, իսկ թեմի քիչ եկամուտներով, ըստ Բաղդասար մետրոպոլիտի, անհնար էր այդ պարտքը վճարել: Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (այսուհետ՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 117, վավ. 382, թթ. 1–2):

¹⁹ Անդ:

դպրոցի անխափան աշխատանքները՝ բարձր գնահատելով կրթության դերը նոր սերնդի կայացման գործում: 1839–1847 թթ. Շուշիի հոգեւոր դպրոցի ուսուցիչների վարձատրութեան, դպրոցի համար որոշ տարիներին հատկացված տան²⁰ վարձի եւ զանազան ուսումնական կարիքների համար ծախսվել է մոտ 4000 ռուբլի, որի մի մասն այդ տարիներին դպրոցի համար հանգանակել էր ժողովուրդը²¹:

Վերագառնալով Շուշիում տպագրված գրքերին՝ նշենք, որ մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ 1854 թ. Շուշիում տպագրվել են մի քանի գրքեր («Ժամագիրք», «Նորահիւս էֆիմերտէ» եւ այլն), որոնց անվանաթերթերի վրա նշված է ոչ թե Բաղդասար մետրոպոլիտի, այլ Մինաս Տառլիճյանի տպարանի անունը: Բանն այն է, որ 1851 թ. հունիսին Կովկասի փոխարքան թուլլատրել էր շուշեցի Մինաս Տառլիճյանին իր մասնավոր տպարանը²² Շամախիից տեղափոխել Շուշի²³: 1854 թ. այս տպարանում հրատարակված գրքերի տպագրությունն արտոնելու կապակցությամբ անվանաթերթերի վրա կարգում ենք. «Հրամանաւ... Սրբազան Արքեպիսկոպոսի Վիճակաւոր Առաջնորդի եւ Մետրապոլիտի Հայոց Ղարաբաղու եւ այլոց, Տեառն Բաղդասարայ... Հասան Զալալեանց...»: Այս հանգամանքը եւս մեկ անգամ հաստատվում է Մ. Տառլիճյանի վկայակոչմամբ, ըստ որի՝ 1854 թ. Շուշիում հրատարակված գրքերի տպագրությունն իրականացվել է Բաղդասար մետրոպոլիտի «բանաւոր հրամանաւ եւ թուլտուութեամբ»²⁴:

1854 թ. հունիսի 27-ին Բաղդասար մետրոպոլիտը կնքեց իր մահկանացուն: Վերջինիս թողած կտակը պահպանվել է երկու տարբերակով, որոնցից երկրորդը փոփոխված տարբերակն է եւ տարբերվում է առաջինից: Կտակն անդրագառնում է զանազան հարցերի, որոնց թվում՝ նաեւ տպարանին: Կտակի նախնական տարբերակում Բաղդասար մետրոպոլիտը ցանկություն էր հայտնում՝ սեփական ուժերով գնած տպարանը տրամադրել Ղարաբաղի հայոց թեմական կոնսիստորիային, իսկ դրա բացակայության դեպքում

²⁰ Մինչեւ 1846 թ. Շուշիի բնակիչներից վարձակալած տներում են գործել Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցը եւ տպարանը, որոնք առաջնորդարանի շենքի պատրաստ լինելուն պես նույն թվականին փոխադրվեցին այնտեղ:

²¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 116, վավ. 363, թթ. 8–9:

²² Մինաս Տառլիճյանի եւ իր ընկերների («երից ընկերաց») տպարանը հետագա տարիներին Շամախիում Մ. Տառլիճյանը տնօրինում է միայնակ, ուստի տպարանը Շուշի տեղափոխվելուց հետո կոչվում է իր անվամբ:

²³ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3269, թ. 5:

²⁴ ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3888, թ. 43-ի շրջ.:

տպարանը տալ վարձակալության եւ տարեկան եկամտի կեսով հոգալ Գանձասարի եւ Ս. Հակոբ վանքերի կարիքները, իսկ մյուս կեսը հատկացնել աղքատների զավակներին ու մասնավոր ուսում ստացողներին²⁵։

Բաղդասար մետրոպոլիտի տպարանի ճակատագիրը, սակայն, այլ ընթացք է ունենում։ Այսպես՝ Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի հրամանով Շուշի է գալիս Գեորգ եպիսկոպոս Վեհապետյանը, որին կաթողիկոսը հանձնարարել էր հսկել մահամեծ մետրոպոլիտի գույքը, որպեսզի այն չհափշտակվեր²⁶։ Այդ ժամանակ Գեորգ եպիսկոպոսին հաջողվում է համոզելով մտքափոխ անել մետրոպոլիտին, ինչի պատճառով վերջինս փոփոխության է ենթարկում իր կտակը՝ տպարանը ժառանգություն թողնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին։ Եւ իսկապես, Բաղդասար մետրոպոլիտն իր անձնական տպարանը՝ ողջ սարքավորումներով, հայր եւ մայր տառերով²⁷, ինչպես նաեւ տառերի ամբողջ արճիճյա կշռով ու չափով²⁸, որոնք սկզբից եւեթ ծառայեցրել էր Ղարաբաղի հայոց թեմի կարիքներին, նվիրեց Էջմիածնի կաթողիկոսությանը։ Բաղդասարի ցանկությունն էր, որ օրվա կաթողիկոսի բարեհաճությամբ այնտեղ տպագրվելիք գրքերում տպարանի անունը նշվեր հետեւյալ կերպ. «Տպեցաւ գիրքս՝ այս անուն՝ ի տպարանի կաթողիկէ Էջմիածնի, ընծայելոյ յԱղուանից Տէր-Բաղդասար Բարձր-Սրբազան մետրոպոլիտ արքեպիսկոպոսէն Հայոց Հասան-Ջալալեանց եւ Ասպետէ»²⁹։

Ղարաբաղի թեմը պետք է Սինոդին, իսկ որոշ դեպքերում նաեւ, Ն. Աշտարակեցու պահանջով, ներկայացնէր թեմի ֆինանսական ելից եւ

²⁵ «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան», գր. Թ., էջ 232։

²⁶ Տէս Լէ0, նշ. աշխ., էջ 167։

²⁷ Տպատառերը պատրաստվում էին հետեւյալ կերպ։ Ամուր մետաղից (սովորաբար պողպատ) պատրաստված ձողիկի ծայրին հալելային արտացոլմամբ քանդակվում էր տառը, որը կոչվում էր «հայր տառ» կամ «տառահայր»։ Այնուհետեւ այն խփվում էր պղնձյա սալիկին, ինչի հետեւանքով առաջանում էր տառաձեւ փոսիկ, որը կոչվում էր «մայր տառ»։ Տառի «մայրը» դրվում էր տառաձուլական գործիքի հատակին, եւ ստացվում էր կաղապար, որի մեջ լցվում էր հեղուկ կապարը (արճիճ) (տէս Ռ. ԻՇԽԱՆՅԱՆ, Հայ գրքի պատմություն, հ. 1, Երեւան 1977, էջ 22)։

²⁸ Բաղդասար մետրոպոլիտը, գնելով Շուշիի բողոքական քարոզիչների տպարանը, իր համեստ միջոցներով այն համալրեց նոր գործիքներով եւ գլխագիր տառերով։ Իր տպարանում հրատարակված ծիսական գրքերը ոչ միայն ձեռք բերեցին գեղարվեստական հարդարանք, այլեւ դրանցում հանգիպող տարբեր զարդանախշերից ստեղծվեցին նոր համադրվածքներ, որոնք կիրառվում էին փորագրապատկերների փոխարեն՝ որպես զարդանախշեր (տէս Ս. ՊԵՏՈՅԱՆ, Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի տպարանում 1837–1840 թթ. հրատարակված գրքերի շուրջ, «Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք», Երեւան, 2021, թ. 1 (10), 120–140 էջ)։

²⁹ Լէ0, նշ. աշխ., էջ 172։

մտից հաշիվները: Մեզ հայտնի են մի շարք այդպիսի մատյաններ, որոնցից երկուսը ներկայացնում ենք ստորեւ. «Հնդհանրական ծախուց Վիճակային արդեանց յընթացս տասն ամաց, յօրէ բացման ատենիս սկսեալ ի 1838 ամէ ց 1848 ամն»³⁰ եւ «Յաղագս մտից եւ ծախուց եւ մնացորդաց դրամուց հոգաբարձութեանս Ղարաբաղու վիճակի»³¹ (1846-ից մինչեւ 1854 թվականի կեսերը): Վերջիններս պարունակում են թեմի բոլոր ծախսերի տարեկան հաշվետվությունները տարբեր ուղղութիւններով, այդ թվում՝ հոգեւոր դպրոցի: Այդ ցուցակներից բացակայում էին մետրոպոլիտի տպարանի ֆինանսական հաշվետվութիւնները, քանի որ տպարանը, ի տարբերութիւն դպրոցի, ոչ թե թեմապատկան էր, այլ փաստացի պատկանում էր մետրոպոլիտին, որն էլ նա ծառայեցնում էր թեմի կարիքներին: Տպարանի՝ մետրոպոլիտի սեփականութիւնը լինելու հաջորդ խոստն փաստն այն է, որ իր ձեռք բերած տպարանը մետրոպոլիտը կարողացավ կտակով նվիրաբերել Մայր Աթոռին, ինչը հնարավոր չէր լինի, եթե տպարանը լիներ թեմապատկան: Հասկանալի է, որ այդ դեպքում Մայր Աթոռն իրավասու չէր, կամ անհրաժեշտութիւն չկար՝ պահանջելու տպարանի ֆինանսական ելից եւ մտից հաշիվները: Բնական է, որ տպարանը պետք է նաեւ թեմի համար որոշ չափով ապահովեր եկամուտներ: Մինչդեռ այն նույնիսկ չէր կարողանում ամբողջութեամբ հոգալ իր իսկ ծախսերը, հատկապէս եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այդտեղ տպագրված դասագրքերը տեղի հոգեւոր դպրոցին տրամադրվում էին անվճար եւ անվերադարձ:

Այստեղ պետք է նշել, որ Բաղդասար մետրոպոլիտը ժամանակի ամենաերեւելի հայ հոգեւորականներից էր, որն ուներ ազգային խոր գիտակցութիւն, որի գործունեութիւնն անմնացորդ նվիրված էր Ղարաբաղի թեմի բարօրութեանը: Ինչ վերաբերում է թեմի ֆինանսական դժվարութիւններին, դրանք հնարավորութիւն չէին տալիս հրատարակելու նոր գրքեր, քանի որ մետրոպոլիտը ձեռք բերված նոր, ինչպէս նաեւ իր անձնական միջոցներն օգտագործում էր ըստ առաջնահերթութեան՝ նախապատվութեւնը տալով թեմի մյուս կարիքներին:

Միանշանակ է, որ այդ շրջանում տպարան ունենալը շարունակում էր մեծ հեղինակութիւն բերել տվյալ քաղաքին (թեմին)՝ ցույց տալով դրա

³⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 143, վավ. 502:

³¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 127, վավ. 421:

զարգացվածությունն մակարդակը: Ահա թե ինչու Սարգիս վարդապետ Զալալյանցը Շուշիին նվիրված անգամ փոքրածավալ բնագրում հիշատակում է Բաղդասար մետրոպոլիտի՝ սեփական միջոցներով գնած տպարանը՝ ընդգծելով վերջինիս կարեւոր դերակատարությունը³²: Ղեւոնդ Ալիշանը եւս, խոսելով Շուշիի՝ որպէս զարգացած, հասարակական, քաղաքական, լուսավորչական կենտրոնի մասին, շեշտում է տպարանի առկայությունը³³:

Ամփոփելով՝ նշենք, որ Շուշիում Բաղդասար մետրոպոլիտի տպարանը եղել է տեղի կրթական եւ հոգեւոր-մշակութային կյանքի հիմնասյուններից մեկը: Այս տպարանի կարեւորությունն ավելի է ընդգծվում, երբ նկատի ենք ունենում այն փաստը, որ նույնիսկ ԺԹ. դարի առաջին կեսին Ցարական Ռուսաստանում Հայ Առաքելական Եկեղեցու վեց թեմերից ոչ բոլորը կարող էին իրենց թույլ տալ տպարաններ ունենալ, ինչը մեծ ջանք էր պահանջում՝ սկսած տպագրական գործին ծանոթ եւ բանիմաց աշխատակիցների ներգրավումից, վերջացրած տպագրական սարքավորումների հայթայթումով, թղթի կանոնավոր մատակարարմամբ եւ դրամի կայուն ապահովմամբ:

Այդ ժամանակ տարածաշրջանում գործում էին մի քանի տպարաններ: Այսպէս՝ 1843 թ. Թիֆլիսում գործել է երկու տպարան, որոնցից մեկը պետական (արքունական) էր, իսկ մյուսը «Յակոբ եւ Դաւիթ Արզանեանց» եղբայրների հիմնած հայկական մասնավոր տպարանն էր³⁴, որը գործել է Ներսիսյան դպրոցի տպարանի 10-ամյա ընդհատման շրջանում՝ 1838–1843 թթ.³⁵: Սրան զուգահեռ՝ էջմիածնի տպարանը, որը հայ իրականության մեջ անուրանալի դերակատարություն է ունեցել, 1830-ականների սկզբներին նոր շունչ էր ստացել: Սակայն այն ուներ տպագրական սարքավորումների համալրման անհրաժեշտություն, ինչը փորձ էր արվում լուծել՝ դրանք գնելով Շուշիի բողոքական քարոզիչներից: Այս մտադրությունը մնաց անկատար, քանի որ Բաղդասար մետրոպոլիտը մինչ այդ արդեն իսկ ձեռք էր բերել հիշյալ տպարանը՝ իր ողջ սարքավորումներով:

³² ՍԱՐԳԻՍ ՎՐԳ. ԶԱԼԱՅԱՆՅԸ, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա., Տփղիս, 1842, էջ 181:

³³ ՂԵՒՈՆԴ ՎՐԳ. ԱԼԻՇԱՆ, Արցախ, Երեւան, 1993, էջ 109–110:

³⁴ Кавказский календарь на 1857 годъ: [12-й год], Тифлисъ, 1856, с. 210.

³⁵ Վ. ՄԱՂԱՅԱՆ, Հայկական գրատպությունը Թիֆլիսում (XIX դար — XX դարասկիզբ), ՊՐՀ, թ. 3, 2013, էջ 70:

Այս հանգամանքով էր պայմանավորված, որ միայն 1837–1840 թթ. Մայր Աթոռում հրատարակվել է եկեղեցական բնույթի ընդամենը 5 անուն գիրք³⁶, մինչդեռ նույն ժամանակահատվածում Բաղդասար մետրոպոլիտը Շուշիում տպագրել էր 13 անուն գիրք, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել դասագրքերի եւ ծիսական գրքերի: Բովանդակային առումով այս գրքերը շատ պահանջված էին, իսկ դրանց տպագրական որակի մասին թերեւս ամենից դիպուկ գնահատականը տվել է Լեոն՝ անվանելով «մաքուր եւ խնամոտ գործեր», որոնք գրեթե չէին տարբերվում մինչ այդ Շուշիում բողոքական քարոզիչների տպագրած գրքերից³⁷:

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

ԷԶՄԻԱՇՆԻ ՍԻՆՈՂԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՂԴԱՍԱՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԻ ՏՊԱ-
ՐԱՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ԳՐՔԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ՑՈՒՑԱԿԸ ԱՆԴՐԱԿՎԱՍԻ
ԵՐԿՐԱՄԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՁԱՊԵՏԻՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ³⁸

4 Մայիսի 1845 թ.

Սբ. Էջմիածին

Ի 11և Դեկտեմբերի. 1844 ամի. ըստ Հրամանի Նորին Կայսերական մեծութե[ան] ինքնակալին ամ[ենայն] Ռուսաց. ի լուսատրչական Հայոց Սինոդոսի էջմիածնի լուսն գլխատարարու[թ]ի[ւն] վիճակային Կոնսիս-

³⁶ 1837–1840 թթ. Մայր Աթոռի տպարանում, ըստ մատենագիտական տվյալների, հրատարակվել են հետևյալ 5 անուն գրքերը՝ Ժամագիրք (1837 թ.), Հարիւր եւ չորս սուրբ պատմութիւն՝ հաւաքեալ ի Հին եւ ի Նոր Կտակարանաց, Մասն առաջին. Յիսուս եւ երկու սուրբ պատմութիւն ի Հին Կտակարանէ, թարգմ. ի ռուս լեզուէ Իսահակ աւ. քհնյ. Սահառունեանց (1838 թ.), Ճաշոց (1839–1840 թթ.), Խորհրդատետր սրբազան պատարագի (1840 թ.), Գիրք հանդիսագրութեանց տօնից կայսերականաց՝ շարակարգեալ ի Սիմէօն Կաթողիկոսէ ամենայն Հայոց Երեւանցոյ՝ յաւելուածովք նորահիւ շարականաց եւ աղօթից, չորրորդ տպագրութիւն (1840 թ.): Տէս Հ. ԴԱՎԹՅԱՆ, Հայ գիրքը 1801–1850 թվականներին (մատենագիտություն), էջ 525. «Նորահայտ գրքեր եւ պարբերականներ. «Հայ գիրք» եւ «Հայ պարբերական մամուլ» համահավաք մատենագիտական ցանկերում շնորհաված հրատարակություններ», պր. Ա., կազմողներ՝ Ս. ՊԵՏՈՅԱՆ, Ռ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, Երեւան, 2018, էջ 24:

³⁷ ԼԷՕ, նշ. աշխ., էջ 125–126:

³⁸ Վավերագիրը շարագրելիս հարազատ ենք մնացել բնագրին, իսկ հապավումն բացելիս ավելացված տառերը դրել ենք ուղիղ փակագծերի մեջ՝ ըստ անհրաժեշտության կատարելով նաեւ ծանոթագրություններ: Այս վավերագիրը հրատարակության ենք պատրաստել այն պատճառով, որ ամփոփ տեղեկություններ է հաղորդում այդ տարիներին գործած Շուշի տպարանի մասին: Վավերագրում հիշատակված գրություններից ոչ բոլորին ենք հղում անհրադարձել, քանի որ բովանդակային առումով որեւէ նորություն չեն պարունակել: Վավերագրից պարզ է դառնում նաեւ այդ տարիներին Շուշիում տպագրված գրքերի ամբողջական պատկերը:

տորիային Հայոց Ղարաբաղու, յ9 Նոյեմբերի հ[ա]մ[ա]ր[ա]լ 1374. յորում գրէ թէ՝ ի նմին լուեալ զառաջադրու[թ]ի[ւն] Նորին Բարձր Սրբազնու-թե[ան] թեմակալ Առաջնորդին Ղարաբաղու յ8ն նոյն Նոյեմբերի ը[նդ] հ[ա]մ[ա]ր[ա]լ 186 ը[ստ] որում առաքելով ի Կոնստիտորիայն որպէս զցուցակն մատենից, տպագրելոց ի վիճակային տպարանի տեղւոյն, նոյնպէս եւ զերիս գրքոյկս նշանակեալս ի ցուցակին ը[նդ] յօդուածովք 1. 9. եւ 12. առաջադրեալ է նմին առաջին իսկ փօշտիւ հասուցանել Սիւն-հոգոսիս ի հետեւումն հրամանի Սորին, յայտ առնելով թէ՝ զօրինակս միւս մատենիցն եւ գրքուկաց բաց յերից այնպիսեացն ի վեր անդր յիշե-լոց նշանակելոց ի ցուցակին առաջի արարեալ է Նորին Բարձր Սրբազ-նութե[ան] Սիւնհոգոսիս. ը[ստ] յայտարարութե[ան]ց իւրոց ի 20 Մա-յիսի 1838 ամի. ի 25ն Մարտի 1839 ամի. եւ ի 19 Փետրուարի 1840 ամի. ը[նդ] հ[ա]մ[ա]րօք 15. 9 եւ 28. ը[նդ] նմին յարակցէ թէ թէպէտ Նորին Բարձր Սրբազնութե[ան] յառաջ քան զայն ունէր ի տպարանի վիճա-կի ի գրքուկացն տպագրելոց ի նմին. ի ժամանակի գերմանացի միսսի-օներաց բայց այնոքիկ ամենեքին բաժանեալ են տեղական բնակչաց եւ չգտանի ի նոցունց ի տպարանի անդ եւ ո՛չ մի, յորպիսեաց զկնի որոնելոյն ի քաղաքին՝ եկն ի ձեռս եւ ո՛չ մի. իսկ որ ինչ վերաբերի առ այն թէ՝ յորում արդեօք ամի եւ ըստ որոյ թոյլատուութե[ան] բացեալ է տպարանն այն. ի ժամանակս գերմանացւոցն ի գործս դիւանատան Նորին Բարձր Սրբազ-նութե[ան] չիք այնպիսի տեղեկութե[ան]ք եւ նմա ինքե[ան] չէ յայտնի: Եւ զտեղեկութե[ան]ս ի գործոց Կոնստիտորիոյ. սահմանեալ է. փութով յոյժ կազմել զպահանջեալ ի Սիւնհոգոսէս ցուցակն, զոր եւ առաջի առնել նմին առաջին իսկ փօշտիւ ը[նդ] երից գրքուկացն Մաշտոց, Շիլոնեան Կալանաւոր (անուանելոց) եւ տետրակ³⁹ այբուբենական անուանելոց ի յայտ ածելով սմին եւ զհասուցեալ ի Կոնստիտորիայն տեղեկութե[ան]ցն զետեղելոց յառաջադրութի[ւն] Նորին Բարձր Սրբազնութեան տ[եառ]ն Մետրապօլտին եւ Ասպետին Բաղդասարայ: Իսկ զգործն կազմեալ ըստ այսմ առարկայի ի Կոնստիտորիին այսու համարել վերջացեալ: Եւ զտե-ղեկութե[ան]ս ի գործոց Սիւնհոգոսիս յորոց երեւանի.

1) թէ տ[ե]ր Կառավարիչն քաղաքական Կառավարութե[ան] յայս-կոյս Կովկասու գրութեամբ ի 16 Սեպտեմբերի սոյն ամի. հ[ա]մ[ա]ր 190. խնդրեալ էր ի Սիւնհոգոսէս ծանուցանել նմա թէ՝ որոյ վճռահատու-

³⁹ Բնագրում՝ տետրար:

թե[ամբ] բացեալ է Ղարաբաղու Հայոց տպարանն եւ ի՞նչ Սիւնհոդոսս հրահանգեալ է ի թոյլատրելն տպագրել ի նմին զմատեանս, նոյնպէս հասուցանել առ նա զցուցակ տպագրեալ ի տպարանի անդ մատենից ցուցանելով զամսն. երբ այնոքիկ են տպագրեալք եւ եթէ կարելին իցէ տպագրեալ մատեանսն: Ի հետեւումն որոյ Սիւնհոդոսս ըստ տպագրական սահմանադրութե[ան] իւրում եղելոց ի 27 Սեպտեմբերի]ն հրամանագրեաց Կոնստնտնուպոլիսի Ղարաբաղու ի 6 Հոկտեմբերի. հ[ա]մ[ա]ր[ա]ւ 2360. ի ստանալ որոյ առաջին փօշտիւ անպատճառ հասուցանել ի Սիւնհոդոսս զցուցակ բոլոր մատենից եւ գրքուկաց տպագրելոց ի վիճակային տպարանի տեղւոյն հանդերձ թարգմանութեամբ ի Ռուսաց լեզու, սկսեալ յօրէ բացման այնորիկ որպէս ի ժամանակս գերմանացի միս[ս]իօներաց, նոյնպէս ընդ հոգեւոր տեսչութեամբ ցուցանելով զամս, երբ այնոքիկ մատեանք են տպե[ա]ւ, ըստ որոյ վճռահատութեան, ը[նդ] նմին առաքեալ եւ զմի մի հատոր իւրաքանչիւր տպեալ մատենի ու գրքուկի, երկիւղիւ ի դէպս յետաձգութե[ան] եւ ոչ կատարելոյ զայն ի հրամայե[ա]ւ ժամանակին ի պահանջողութե[ն] ըստ օրինաց. ը[նդ] նմին յարակցել թէ՛ յորո՞ւմ ամի. եւ ըստ որոյ թոյլտուութե[ամբ] բացեալ էր այն տպարան ի ժամանակի գերմանացւոց. եւ վ[ա]ս[ն] ոչ յիւրումն ժամանակի կատարելոյ կրկնեցաւ յիշեալ Կոնստնտնուպոլիսի ի 27 Հոկտեմբերի եւ 10 եւ 18 Նոյեմբերի հ[ա]մ[ա]ր[ա]օք 2463. 2532. եւ 2561. եւ զարարեալ տնօրէնութե[ն] Սիւնհոդոսսի գրեցաւ Տե[առ]ն Կառավարչի քաղաքական Կառավարութե[ան] յայսկոյս Կովկասու ի 18 Նոյեմբերի. հ[ա]մ[ա]ր[ա]ւ 2562. ի հետեւումն կրկնողական պահանջման նորին յ2 Նոյեմբերի. հ[ա]մ[ա]ր[ա]ւ 239:

2) Վիճակաւոր Առաջնորդն Ղարաբաղու մետրապօլիտն Բաղդասար յայտարարութեամբ ի 11 Դեկտեմբերի. 1837 ամի. հ[ա]մ[ա]ր 72. յայտնեալ էր Սիւնհոդոսսի թէ՛ հայկական տպարանն գերմանացւոց որ ի բերդաքաղաքին Շուշու ի վաճառելն նոցա զայն ի Սեպտեմբեր ամսուոյ ըստ խորհրդոյ յառաջաւոր իշխանաւորաց քաղաքին գնեաց նա զայն հանդերձ ամ[ենայն] հարկաւոր պարագայիւքն իւրովք ի թիւս որոց էին եւ 100 պրակք անգիր թղթոց եւս եւ զանազան գրեանք ի պէտս մանկանց տպեալք անդ եւ ի Մոսկով՝ 1219 մանէթի. յորոց զ480 մանէթսն հատուցին ժողովուրդք տեղւոյն սեպհական յօժարակամութեամբ իւրեանց, իսկ զմնացե[ա]ւ 719 մանէթն փոխ առեալ է մուրհակաւ յայլոց ինքնին հատուցի զորս սակաւ առ սակաւ պարտի վճարել. ը[նդ] նմին յարակ-

ցեալ է թէ՛ ի գնելն զտպարանն զայն, նպատակ նորա այն էր, զի մնասցէ այն անշարժ անդ ի քաղաքին, գիտելով չափ, զի եթէ ելանէր այն ի ձեռաց, անյուսալի լինէր այնուհետեւ ածել երբէք այնր զայլ տպարան, եւ թէ՛ կատարելու[թ]ի[ւ]ն ցոր աստիճան է հասեալ առաջի էր արարեալ զգրքոյկն ընթերցուածք ի ս[ուր]բ Գրոց Հին Կտակարանի, հաւաքեալ ի պէտս վարժարանացն տպեալն յայնմ տպարանի ի 1829 ամի⁴⁰. ի հետեւումն որոյ ըստ օրագրական եզրակացութե[ան] զառաջի արարեալ մատեանն ը[ստ] հրամանի յ2 Փետրուարի⁴¹ 1838 ամի. հ[ա]մ[ա]ր[ա]ւ 123. առաքեաց առ վերակացուն Աթոռապատկան գրատան Յովհաննէս վ[ա]րդապ[ե]տն Շահխաթունեանց, յաղագս անցուցանելոյ զայն ի ցուցակն մատենից եւ պահպանելոյ ի միասին ը[նդ] այլոց մատենիցն. իսկ վիճակաւոր Արք Եպ[ի]ս[կոպոս]ի Ղարաբաղու մետրապօլիտին Բաղդասարայ հրամանաւ ի նոյն թիւ հ[ա]մ[ա]ր 124. յայտնելով զգոհունակութե[ան] ի գիմաց Սիւնհոգոսիս վ[ա]ս[ն] հոգ տանելոյ նորա զբարեւաւութե[ան] եւ զբարեկարգութե[ան] տեսչութե[ան] նորին յանձն եղեալ վիճակին Ղարաբաղու ի մասին գնելոյ վ[ա]ս[ն] թեմին իւրոյ զյիշեալ տպարանն, պատուիրեաց նմա ի հարկաւոր դիպուածս մի՛ երբէք տպել ի վիճակի իւրում զորպիսի եւ իցէ եկեղեցական մատեանս առանց հրամանի Սիւնհոգոսիս եւ առանց նախընթացաբար քննելոյ զտպագրելի մատե[ա]նն զայն ի Սիւնհոգոսի աստ:

3) Նոյն թեմակալ Առաջնորդն մետրապօլիտ Բաղդասար ի հետեւումն վերոյիշատակե[ա]լ հրամանի Սիւնհոգոսիս յայտարարութեամբ ի 12 Մարտի. 1838 ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 10. յայտնեալ է Սիւնհոգոսիս թէ՛ յառաջ քան զստանալ զայն հրաման տուեալ էր ի տպ[ա]գրել զՍաղմոսն Դաւթի ըստ գաղափարին Սաղմոսի որ ի միջի Ատենի ժամագրքին տպագրելոյ ի ս[ուր]բ էջմիածին, որոյ ընթացք տպագրութե[ան] անցեալ գոլով ցերկրորդ Կանոնն բարուք համարեաց ի գլուխ հանել զտպագրութե[ան]ի[ւ]ն այնր. չկամելով անգործ եւ դատարկ թողուլ զտպագրատունն, զի հնարաւոր լիցի գոնեայ լրացուցանել զծախսն արարեալ վ[ա]ս[ն] տպագրատան եւ ի հատուցումն վարձուց պաշտօնէից նորին: Առ այս Սիւնհոգոսս էջմիածնի ըստ օրագրական եզրակացութեան իւրում կայացելոյ ի 20 Ապրիլի 1838 ամի. հրամանաւ ի 28 Մայիսի, հ[ա]մ[ա]ր[ա]ւ 922. ի մէջ այլոց

⁴⁰ «Ընթերցուածք ի Սուրբ Գրոց Հին Կտակարանի: Հաւաքեալ ի պէտս վարժարանաց», Շուշի, 1829:

⁴¹ Բնագրում ամսաթիվը սխալմամբ նշված է՝ «ի 12 Փետրուարի»:

հրամանագրեաց Արք Եպ[ի]ս[կոպոս]ին Բաղդասարայ, զի նորին բարձր Սրբազնութեանն այսուհետեւ եթէ պատահեացի հարկաւորութիւն] տպելոյ ի նորոգ տպարանի անդ նմա յանձն եղեալ թեմին Ղարաբաղու զմատեանս ունիցի ինքեան ի ձեռնարկութիւն] ի սոյնանման դիպուածս զկանոնս⁴² գծագրէ այս ի 14 հատորոյ Սվոտին օրինաց կարգադրութիւն]ն վ[ա]ս[ն] դատաքնութե[ան] մատենից ի յօդուածսն 23 պարբերութե[ան] բ. ծանօթութեամբ հանդերձ եւ ի 78: եւ 4: Յիշատակե[ա]լ թեմակալ Առաջնորդն Ղարաբաղու Արք Եպ[ի]ս[կոպոս]ին Բաղդասար ընդ] յայտարարութե[ան]ց ի 20 Մարտի 1838 ամի. հ[ա]մ[ա]ր 19. ի 25 Մարտի 1839 ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 15⁴³. յ19 Փետրուարի⁴⁴. ի 13 Մայիսի 1840 ամի հ[ա]մ[ա]րօք 9. եւ 28. առաջի է արարեալ Սիւնհոգոսիս զերկուս օրինակս գրոց Սաղմոսացն Դաւթի. եւ զմի մի հատոր Ժամագիրք. Եփրեմ Խուրի. Համառօտ Քերականութիւն]. Խորհրդատետր. Կոքր Պատմութիւն] Աղուանեաց. Նորոգ Համառօտեալ Քերականութիւն], զերկու հատոր Կրօնագիտութիւն]ս եւ զերկու հատորս Նորոգ Համառօտեալ Տրամաբանութիւն], տպագրեալք ի տպարանին Ղարաբաղու, զո[ր]պի[սի] գրեանս Սիւնհոգոսս էջմիածնի ընդ] հրամանաց յ30 Յուլիսի, 1838 ամի. ի 29 Մայիսի 1839 ամի. ի 25 Մայիսի եւ ի 20 Յուլիսի 1840 ամի. հ[ա]մ[ա]րօք 798. 642. 993. եւ 1409. առաքեալ է առ վերակացու գրքատան էջմիածնի Յովհաննէս վ[ա]րդապ[ե]տն Շահխաթունեանց ի անցուցանելոյ ի տումար Ժապաւինեալ եւ ունելով ի գրատան անդ հրամայեալն կարգաւ: ՀՐԱՄԱՅԵՆ Հրամայեալ վերատեսչին գրատան Աթոռոյս հանեալ անտի զառաքեալ առ նա ընդ] գծագրեալ հրամանաց Սիւնհոգոսիս զմի մի հատոր տպե[ա]լ ի տպարանի վիճակին Ղարաբաղու գրեանս որ գոն զԺամագիրք, Խորհրդատետր, Սաղմոս, Եփրեմ Խուրին, Քերականութիւն Համառօտ, Պատմութիւն Աղուանից, Կրօնագիտութիւն], Տրամաբանութիւն] Համառօտ. եւ Քերականութիւն] Համառօտ զորս ընդ] առաջի արարելոցն ընդ արդեան յայտարարութե[ան] Կոնսիստորիին Ղարաբաղու՝ որ գոն միոյ Շիւրնեան կալանաւորի. Մաշտոցի եւ Տետրի Այբուբենական առաքեալ ընդ առան-

⁴² Բնագրում՝ զկանոնս:

⁴³ «Ի 25 Մարտի 1839 ամի հ[ա]մ[ա]ր[ա]ւ 15.» տվյալը հավելում է, որի մասին բնագրի վերջում կա հետեւյալ ծանոթագրութիւնը. «Ի տողամիջին գրեալ է ի Սիւնհոգոսէս. ի 25 Մ[ար]տի 1839 ամի հ[ա]մ[ա]ր 15.»:

⁴⁴ Բնագրում ամսաթիվը սխալմամբ նշված է՝ «Ի 29 Փետրուարի»:

ձին ցուցակի ցուցեալ զժամանակն տպագրութեան այնոցիկ, առ Կառավարիչն քաղաքական կառավարութեան] յայսկոյս Կովկասու, գծագրութեամբ արդեան յայտարարութեան] վիճակային Կոնսիստորիային Ղարաբաղու. եւ ի յայտ եկելոցն ի վերոյգրեալ տեղեկութեան] ց ծանուցանել Նորին Գերազանցութեան] առ գրութիւն նորին ի 16 Սեպտեմբերի սոյն ամի. հ[ա]մ[ա]ր[ա]ւ 190. յարակցեալ ը[նդ] նմին թէ՛ Սիւնհոդոսս ի դէպս տպելոյ զեկեղեցական մատեանս ցուցեալ էր Արք Եպիսկոպոսին Բաղդասարայ վ[ա]ս[ն] հրահանգութեան] զ14 հատորոյ սլօտին օրինաց 1836 ամի ի կանոնաց ցենզօրի զ23 եւ 78 յօդուածս:

Տեղակալ Ատենապետի՝ Արք Եպ[ի]ս[կոպոս] Բարսեղ

Անդամք Սիւնհոդոսի⁴⁵:

Ղուկաս Արք Եպ[ի]ս[կոպոս]

Յակովբ վրդ[ա]պ[ետ] Տ[է]ր-Մ[ա]րգ[ա]րեան

Սահակ վրդ[ա]պ[ետ] Սատունե[ան]ց

Փիլիպպոս վրդ[ա]պ[ետ] Արամե[ան]ց

Աւետիք վրդ[ա]պ[ետ] Ծաղիկեանց

Կատարեցաւ ի 4ն Մայիսի

1845 ամի:

ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 17, վավ. 563 կամ թթ. 991—994, բնագիր, ձեռագիր:

РЕЗЮМЕ

В статье мы рассмотрели историю типографии митрополита Карабахской (Арцахской) епархии архиепископа Багдасара Гасан-Джалалянца, который в первой половине XIX века вел большую типографскую и просветительскую деятельность в Шуши. Он был одним из самых выдающихся армянских священнослужителей того времени, имевшим глубокое национальное сознание. Деятельность архиепископа была полностью посвящена благополучию Кара-

⁴⁵ Բնագրից հետո կա էկզեկուտորի՝ տնտեսական գործերի պատասխանատուի հետեւյալ ծանոթագրութիւնը. «Ի գրեւն զայս առանձին յօդուած անդամ Սիւնհոդոսիս Արք Եպ[ի]ս[կոպոս]ն Ստեփաննոս Արարատեանց, ձեր ներկայ յայսմ ատենակալութեան] ի պատճառս բացակայութեան] նորին գործով ծառայութեան]»:

бахской (Арцахской) епархии. Эта типография, фактически принадлежащая митрополиту, полностью обслуживала потребности епархии, издавая учебные и ритуальные книги.

В то время в регионе действовало несколько типографий, одна из которых была типография в Шуши. Ее наличие приносило большой авторитет городу, демонстрируя уровень его развития.

В статье мы подробно проанализировали деятельность и публикации этой типографии, их прикладное значение, а также вопросы, связанные с цензурой и разрешением на печать.

SUMMARY

The article examines the history of the printing house of Archbishop Baghdasar Hasan-Jalalyants, Metropolitan of the Diocese of Karabakh, who carried out a large typographical and educational activity in Shushi in the first half of the 19th century. He was one of the most prominent Armenian clergymen of the time, who had deep national consciousness and whose activity was fully devoted to the welfare of the Diocese of Karabakh. This printing house that in fact belonged to the Metropolitan, was fully serving the needs of the Diocese by publishing scholastic and ritual books.

During that period, there were several printing houses functioning in the region, one of them was the printing house of Shushi. Its existence defined the great authority of the city, demonstrating the level of its development.

In the article, we have analyzed in detail the activity and publications of this printing house, their practical significance, as well as issues related to censorship and permission to print.

